


ՃԿԳԻ Ընդ Ահարոնի առանձինն՝ հինգ: Ընդ Մովսեսի և ընդ Ահարոնի՝ ԺԵ: Ընդ Մարիամու՝ մի: Ընդ Մովսեսի և Եղիազարու՝ երկու: Ընդ Հագարու՝ չորս: Ընդ Բաղամու՝ վեց: Հրեշտակօք՝ երկու: Իշոփ՝ մի: Միանգամայն ԲՃ ԿԱ՛՛:

« Լոյս բանին ի խելնն ծագէ: Խորհուրդն ի սիրտն. հեզութիւնն՝ ի լերդն. ցասուցն՝ ի լեղին. ստուգութիւնն՝ ի փա(յ)-ծաղն. հանճարն՝ յերկամոռնքն. սէրն՝ ի թոքն. ազահութիւնն՝ ի ստամոքսն, հպարտութիւնն՝ ի բերանն, հանգիստն՝ ի պարանոցն. զօրութիւնն՝ յուսն. զործնն՝ ի ձեռնն. ար(ո)-եստն՝ (յ)իմաստունս: »



### ՊԱՐՍԿԱՆԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

#### ԵՐԳԻՁ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՕՒԱՆԵԱՆ

ՆՐԱ ԿԵԱՆՔԸ: Պարսկահայ երգիչների շարքում կարելի է յիշատակել նաև Տէր-Կարապետ Օհանեանին, որ ծնւել է 1815 թ.ին, Սպահանի ֆէրիա գաւառի Սանգի-բարան գիւղում: Նրա նախնիքները գաղթել են Հին-Ջուղայից 1606 թ.ին, Շահ-Աբրահիմ ձեռքով, Սկզբնական ուսումն առել է Կարապետը գիւղում, յայտնի տիրացու Տէր-Դաւթի մօտ, ապա անցել է Նոր-Ջուղա և ուսել իր հօրեղբոր՝ Անդրէասի մօտ: Այնուհետև վերագտնաւով գիւղ, պարապել է հողագործութեանը: Պասակել և ունեցել է մի որդի Յովհաննէս անունով, 1840 թ.ին, 26 տարեկան հասակում, ձեռնադրել է քահանայ Խաչատուր Աբր-Եպիսկոպոսի ձեռքով և երկու տարի քահանայական պաշտօն է վարել Նոր-Ջուղայում: Յետոյ վերադառնաւով գիւղ, ստանձնել է Ս. Յովհաննու եկեղեցու քահանայութեան և միաժամանակ գաւառի գործակալութեան պաշտօնը, որը վարել է մինչև իր մահը: Մեռել է 1897 թ.

Մարտ 16-ին և թաղւել Սանգիբարանի հայոց գերեզմանատանը, ուր վրան քար էլ դրւած չէ:

Ժամանակակիցների վկայութեամբ՝ Տէր Կարապետը եղել է իր ժամանակի բանիմաց քահանաներից մէկը և ամբողջ գաւառում յայտնի է եղել իբրև ասուածաբան-կրօնագէտ: Նա լաւ տեղեակ է եղել Ս. Գրքին և հմուտ ասուածաբանական խնդիրներին. սիրում է եղել յաճախ վեճարանել Մահմեդական մօլլաների և բողոքական միսիօնարների հետ՝ կրօնական բարդ խնդիրների վրայ: Այսօր երգչին ճանաչողները մեծ յարգանքով են յիշում նրա անունը:

Քերթածները, իբրև երգիչ, Տէր-Կարապետը թողել է բաւական թւով թէ թուրքերէն և թէ հայերէն երգեր, որոնք հաւաքւած են երկու «դավթար»ների մէջ. զրանցից մէկը կաշեկազմ է և բաղկացած 108 թերթից և պարունակում է 181 կտոր երգ, որի 64-ը հայերէն է և 117-ը թուրքերէն: Իսկ միւսը լաթնկազմ է և պարունակում է առաջին «դավթար»-ի մէջ եղած հայերէն և թուրքերէն երգերից շատերը: Այդ երգերը, որոնք երգչի զգացմունքների զգեմունքն են, մեծամասնութեամբ բարոյա-խրատական և կրօնական բովանդակութիւն ունին: Այնտեղ կան կրօնական ջերմեանդութեամբ լի բազմաթիւ տաղեր. հաւատքի, յուսոյ, սիրոյ, այլ և բարոյ և ճշմարտութեան խրատներ. մեկնութիւններ Ս. Գրքի, եկեղեցոյ եօթը խորհրդի, երկրաւոր ու հանդերձեալ կեանքի վրայ, այլ և ներբողներ Աստուծոյ, Յիսուսի, Ս. Յովհաննիսի վրայ. կան նաև աղաչանք, հայցւածք, աղերսանք առ Աստուած և այլն: Այդ երգերով պատկերանում է մեր առաջ ոչ միայն հաւատացեալ և եկեղեցասէր մի քահանայ, որը յիշեցնում է մեզ միջնադարեան սուրբ հայերին, այլ և իմաստասէր-կրօնագէտ և բարոյախօս-քարոզիչ, Եւ իսկապէս Տէր-Կարապետն իր երգերի մէջ աւելի ասուածաբան-բարոյախօս քարոզիչ է, քան բանաստեղծ:

1. Գամբըր սխալ էր. պէտք էր ըլլաւ ԲՃ ԼԲ:

Տէր-կարապետն ունի նաև մի քանի հատ հարսանիքի և մի քանի հատ էլ երգիծական, այլարանական և պատմական երգեր, որոնց մէջ նա թողնում է իր կրօնական—աստուածաբանական խորհրդածուլթիւնները, մեկնութիւններն ու քարոզները և երգիծում է, պատմում ու նկարագրում: Սակայն պիտի ասել, որ այդ երգերը, որոնք դեռ անտիպ են, հիւսւած չեն տաղանդով, ինչպէս Յարթին օղլու: Ամիր օղլու, Ղուլ Էգազի և Արզունու երգերը. նրանք մեծամասնութեամբ զուրկ են բանաստեղծական նրբութիւնից և աւելի արեւեստական ու ազգատ յանգերով կերտւած երգեր են: Բայց չնայած դրան՝ ժողովուրդը սիրում է նրանց և երգում, և դա հասկանալի պատճառով. Փէլիբայի նման յետ ընկած մի վայրում, ուր դեռ խաւարն ու տգիտութիւնն է տիրապետում, և ուր չէ զարգացած ժողովրդի բանաստեղծական ճաշակը, բնական է, որ այդ երգերը նրան բաւարարութիւն պիտի տան և երգւին: Այժմ ծանօթանանք երգչի պօզիւայի հետ:

1. ԲԱՄՈՅԱԿԱՆ—ԽՐԱՍԱԿԱՆ: Տէր-կարապետի երգերի մէջ առաջին տեղը բռնում են բարոյական—խրատական երգերը, որոնց մէջ պէտք է որոնել նրա նշանակութիւնն ու ոգին: Այդ երգերով, որոնք թւով եւրեսուն և մէկ հատ են և որոնցից չորսի երկրորդ և չորրորդ տողերը զուած են այբուբենի բառախաղով՝ երգիչը քարոզում է բարոյականութեան սկզբունքներն և տալիս է մի շարք կենցաղավարական խրատներ: Այսպէս՝ մի տեղ նա իր սեփական կեանքի փորձառութիւնների վրայ հիմնելով՝ խրատում է—քահանայի թէ աշխարհականի—միշտ բարի մտածել, իր ոյժերից աւելի բան չ'կատարել, իր չափսն ու պատիւը ճանաչել, չ'նախանձել, սիրտն իստակ պահել և չար բանից հեռու մնալ: Մի ուրիշ տեղ յորդորում է հոգևոր սէրը սրտի մէջ միշտ վառ պահել, բարի լինել և պարկեշտ վարք ու բարք ունենալ: Մի այլ ոտանաւորով երգիչը գրեթէ նոյն մտքերն է յայտնում, այսինքն՝ միշտ բարի

ճանապարհի դուռը բախել, չարից փախչել, սուրբ աւետարան կարդալ, լաւ, ընտիր բաներից խօսել և մտքով կոյր չ'լինել: Նոյնպէս խրատում է ուղիղ բարբառել, խօսքերն ակի նման շարել, հովակոր խօսքերը «անհանգչելի» կրակի նման վառել, բերանից կայծակի նման ցուլացող լուսաւոր բաներ դուրս հանել և ողջին էլ արուսեակի նման պայծառ լոյս տալ: Եւ իսկապէս, երգչի ասելով, հէնց կանոնն այդ է խօսք կամ երգ ասողի, որ նախ՝ ինչ որ խօսի, կարգով, «մարիֆաթին» վարքով և համեղ խօսի, զգոյշ կեննայ, խօսքերը լաւ տեղին շարի, կանոնով զարդարի, իրար յարմարեցնի, իր չափսն իմանայ, պատիւը հասկանայ և բերանն ուսմունքով բանայ: Երկրորդ՝ պէտք է միտքը սուր լինի, լեզուն՝ խտակ, խօսքից՝ կատարեալ իմաստուն, որ մտքերն աղբրի ջրի նման բղխին, արարմունքը բարի, գործերը՝ մաքուր, վարքը՝ հանդարտ ու դուրեկան: Բայց այդ բոլորը դեռ բաւական չեն: Ով որ ուզում է բան ճառել, պէտք է զլինի յուշ, սրտին՝ բորբոք և դէյրաթ—ջուշ, ինչպէս նաև աստուածային շնորհք, քնքշութիւն և «մարիֆաթ» ունենայ: Ահա այսպիսի բարեմասնութիւններով օժտւած պէտի է լինի մարդ և այդ յատկութիւններն անհրաժեշտ գծեր են, որովհետև մարդ նրանցով միայն կարող է բարձրանալ և բոլորին էլ սիրելի դառնալ. եւ որպէս զի իր խրատներն ազդեն ընթերցողներին վրայ, երգիչը, նոյն մտքերը կրկնում է մի քանի ոտանաւորների մէջ՝ տարբեր ձևերով:

« Ինչի խօյ », « Կարձաւտտ պատմութիւն » և « Հոգևոր խրատ » ցերեւածների մէջ երգիչը խօսում է աշխարհիս ունայնութեան և մահւան մասին: Կեանքը, ասում է նա, երազ է, աշխարհը՝ ունայն, մարդիկ՝ անցնող քարաւան, որ այսօր գոչում են աշխարհի վրայ, էգուց երազի պէս անյայտանում զէպի գերեզման: Նրանք «կող» են գալիս մահի ձեռքից: Ուրեմն չպէտք

1. Աւելոյ՞ ?

է յոյս զնել ո՛չ աշխարհային սէրի և ո՛չ էլ հարատուութեան, լաւ հագնելու կամ լաւ ուտելու վրայ, և որովհետև այդ ամենը ան-ցողական են և պաղանցիկ: Եւ քանի որ « մենք մահինն ենք, մահը մերը » երգիչը յորդորում է թողնել աշխարհի սէրը և հոգևոր ուղիղ ճանապարհով ընթանալ, այն է. Աստծոյ պատուէրը պահել, սուրբ անտարան և հոգևոր գրքեր կարդալ, աստածային բաներից խօսել, Երբորդու-թիւնը ճանաչել, հոգին ծաղկած կանաչ ծառի նման՝ աղօթքով զարդարած պահել, մեղքերը խոստովանել և բարի գործել: Ահա այդ է իսկական կենսը:

Հոգևոր այս խրատներից յետոյ, Տէր-կարապետը տալիս է նաև քաղաքավա-րութեան վերաբերեալ մի շարք խրատներ: Երգիչն այդ անհրամձեշտ է գտնում, որով-հետև տեսնում է, որ գիւղացիները մե-ծամասնութեամբ կրթութիւնից զուրկ լի-նելով՝ քաղաքավարութեան տարրական պահանջների մասին հասկացողութիւն չու-նին, որով « մէյլսնեհրամ » իրենց լաւ չեն պահում: Իբրև հոգևոր հայր՝ երգիչը բարոյական պարտականութիւն է զգում իր հօտին այդ ուղղութեամբ դաստիարա-կելու: Եւ « մէյլիս » նստողներին կամ կանգնողներին խրատում է հանդարտ և կամայ խօսել, զգոյշ ժամ գալ, եկողի համեմատ տեղ բանալ, ձեռ և ոտ չ'մեկնել, « լիր » չ'խօսել, չ'ծիծաղել և այլն: Ահա այս է պահանջում քաղաքավարութիւնը իւրաքանչիւր հանդիսականից: Բայց տես-նենք մէջլիսում « ուստատ » մարդն իրեն ինչպէս պէտք է պահէ: Երգիչը նրա համար էլ տալիս մի շարք խրատներ. յորդորում է նրան մէջլիսում լաւ խորհրդաւոր խօ-սել, պտղաբեր ծառի նման զարդարած ճառել, բերանից ծաղկել նման անուշ հոտ հանել, նստողներին քաղցր խօսքով « խօշ-հայ » անել և այլն: Բացի սրանցից՝ Տէր-կարապետն ունի « Տրտմութիւնի վերայ » և « հարկատ արախ կենայն յաւ է » խորա-գրով երկու այլ խրատական ոտանաւոր-ներ, որոնցով նա խրատում է արտում չ'մնալ, որովհետև իր սեփական ապրում.

ներից եկել է այն եզրակացութեան, որ արտութիւնը բացի վնասից ո՛չ մի օգուտ չունի. յորդորում է ուրախ և զւարթ մնալ, որովհետև դա է մարդու առաջադիմու-թեան բանալին:

Այսպէս երգիչն ունի մի շարք բարոյա-կան-խրատական երգեր, որոնցով նա խրատում է, քարոզում, յորդորում, ու-սուցանում, կրթում և դաստիարակում:

(Շարունակելի)  
Բումբէյ

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՍ

ՀՆԱԽՈՍՍՈՒՄ

Ա Բ Բ Ա Յ Ա Ր Ա Ն

Քրիստոնէական հնախօս բառագիրը Ար-բայարան անուան ներքև նկարագիր կ'ընէ հին վանորէից ներքին կազմութեան և շինուածոց վրայ, կ'արժէ ակնարկ մը տալ և հարեանցի յիշել մեր քնաշխարհին մէջ վանքերու նկատմամբ գործածուած բա-ռերը: — Ժ. Մ. Բէս քսան և չորս փոքր մասերու կը բաժնէ գրութեանն նիւթը. ասոնցմէ ընտրանօք տասն և եօթը մասերը կը համառօտենք որոնց զլիսակարգութիւն-ներն են. Ա. Սահման և տեղի. Բ. Հիմն-արկութիւն. Գ. Կրկին վանատունք. Դ. Յօրինուած. Ե. Ճարտարապետութիւն. Չ. Երչապատ պարիպե. Է. Խօսարան. Ը. Հիարանց. Թ. Ժամատուն. Ժ. Ճաշարան. ԺԱ. Կնէարան. ԺԲ. Փակարան կամ ար-գելարան. ԺԳ. Նորընծայարան. ԺԴ. Հի-աւնդանց. ԺԵ. Գերեզմանատուն. ԺԶ և ԺԷ. Մատան և Աշխատանց:

Ա. Սահման եւ տեղի

Վանք մը՝ որուն զուխը կամ առաջ-նորըը արբայ մ'է և կը կառավարուի անկէ՝ կ'ըսուի արքայարան: Այս տեղին պէտք է կանոնապէս հաստատուած ըլլայ և ունենայ իւր ինքնօրինութիւնը (auto- nomie) և կազմակերպուած ըլլայ գոնէ